ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«23» 12 2025 թ. Թիվ 294-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 118-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների, այլ պաշտոն զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 118-Լ հրամանի (այսուհետ՝ հրաման) N 1 հավելվածի 4-րդ կետի 1.1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Հրամանի N 1 հավելվածի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ ենթակետով.

«1.2) Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի աջակցող բաժին.»:

3. Հրամանի N 2 հավելվածի 7-րդ կետի 1.1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

4. Հրամանի N 2 հավելվածի 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ ենթակետով.

«1.2) Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի աջակցող բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	4
	Տեխնիկական սպասարկում	
3.	վարորդ	1
4.	հավաքարար	1
5.	ԸՆԴԱՄԵՆԸ	7

»:

5. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ